զայն տեսեալ կատարելոցն Կորեան և Ղևոնդեայ՝ առ նոյն դիմէին փութապէս, և 'ի նախանձ ընդ սոսա շարժեալ Յովհաննու և Արձանայ՝ զկարծեցեալ յուլութիւն իւրեանց երագէին և հասեալք լինէին անդր ։ Կասկածէին թէ արդեօք 'ի մանկագունիցն և 'ի վերջոյ եկելոցն ինքեանք աւագագոյնք և առաջինք՝ գերազանցեալք լինիցին . երկնչէին թէ գուցէ պակաս ինչ կամ թերի առ հայրենիս տարցեն . վասն որոյ զամենայն մանր քննէին , և 'ի գիւտս նշանախեցից և արտասանութեանց անգամ՝ անբաւական համարեալ զամենայն Աթէնս՝ դիմէին յԱղեքսանդրիա ընդ զայն խնդիր ։ Այսչափ ջան էր մերոցն Թարգմանչաց ։ Ո՛րքան նախանձաւորս սոցա անկ իցէ ձեզ լինել, ո՛ մանկունք , որք զօրէն նոցա ընդ օտար աստեղօք յուսմունս պարապիք , և ակնկալեալ մնայք 'ի հայրենեաց ։

Հայրենիք յայնժամ կոչէր և զնոսա 'ի տարաշխարհիկ ուղևորութեացն . արդէն կիսոց ժամանեալ և խառնեալ էր 'ի հոգս եկեղեցւոյ և քաղաքի . արդէն սգացեալ լացեալ էր նոցա զՎռամշապուհ և զաղէտս աշխարհին . մինչ կէսք անծանօթ յետին չարեացն առ անձուկ տեսոյ հարցն սրբոց զորս նշմարէին մօտք մերձեալս 'ի դուռն տապանի , փութային ժողովէին 'ի ժամադրութիւնս Բիւզանդիոնի , և անդուստ թռչէին ծովաչուք և ցամաքաթևք , հասանէին 'ի սահմանս Հայոց , և զհող եդեմին 'ի նմա համբուրեալ՝ դէպ ուղիղ զճանապարհ արքունի և հայրապետական աթոռոցն ունէին ։

Սակայն զմէ՞ ձգնել ինձ այսուհետև զբանս , որ ոչ ես ախորժէ յառաջ խաղալ . առ իմէ՞ միւսանգամ փեռեկել զսիրտս տխրական յիշատակօք . և ո՞ աստանօր ոչ ընթացաւ մտօք 'ի հրաշալին յայն դրուագ Խորենեան . “ Եւ մինչ նոքա զմերն յուսային դարձ ,, . . . համայն և մեք փութապէս դիմեալք 'ի Բիւզանդիոյ՝ յուսայաք ,, հարսանեաց պարել , անվեհեր ես ,, բազութեամբ կրթեալք , և առագաստի ասել երգս ,, . . . Թողլի՞ց արդեօք նմա յառաջ զբանսն խաղացուցանել , եթէ իմովք ցուրտ բանիւքս զհրայնոց սորա զհետերթանքն յօրինեցից . եթէ 'ի սպառ ընդ լռութեամբ ծածկեսցուք զայս արկած ։ Այլ մի . զի մի յաջողութեան տարփողք և 'ի ձախողակէն թուիցիմք զարհուրեալք , մեք՝ որ հանապազ 'ի սոսին դեգերիմք , և զնմանեսն սոցա գրեմք մեզ փառս , մի թագուսցի և նոցայն վիշտ՝ յորմէ այնքան աճեցին նոցա փառք առ 'ի յԱստուծոյ ։

(ԱՒԱՐՏՆ ՅԱՌԱՋԻԿԱՅՍ ։)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՌԱՄԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Վիճաբանութիւն երկնի և երկրի ։

ԱՅՍ իմաստազուարճ երգոյս հեղինակն է՝ Ներսէս անուամբ վարդապետ մը , որուն ժամանակը կ'երևնայ թէ ասկէ երկու դար մը առաջ եղած պիտի ըլլայ . քանի մը տող ուր որ կէտեր դրած ենք՝ դուրս թողուցինք չփոթ գրուած և անհարազատ երևնալուն համար , ինչպէս վերջի տողերն ալ լաւ կապակցութիւն մը չեն ցուցըներ ։

ԵՐԿԻՆՔՆ ու գետինքն եղբարք ,
Աձապ ո՞ր քան զորն աւելի . —
Օ երկնից բարձրութիւնն ասեմ ,
Նա՛ գետնին պտուղն աւելի ։
Երկինքըն գետնին ասաց .
Բան ունիմ քանց քեզ աւելի ,
Բզպայծառագուն աստղունքս ,
Ամէնն իմ կողէս կուլինի ։
Գետինն երկընուցն ասաց ,
Աստուծոյ մուննաթն աւելի .
Վեցհազարագուն ծաղկունքս
Ամէնն իմ կողէս կուլինի ։

Երկինքըն գետնին ասաց ·
  Ինձ ունիմ քանց քեզ աւելի ·
  Իմ ցօղն 'ի քենէ կտրեմ
  Քո ծաղկունքն որո՞վ զարդարի :
Գետինն երկընուցն ասաց ·
  Աստուծոյ մուննաթն աւելի ·
  Քու ցօղն 'ի ծովուն կ'առնես ,
  Ծովուն ակն յինէ կուլինի ·
  Ու իմ ակն որ 'ի յիս քաշեմ՝
  Նա քո ցօղն ուստից կուլինի :
Երկինքըն գետնին ասաց ·
  Ինձ ունիմ քանց քեզ աւելի ·
  Պարզիմ բարկ արև դիպիմ,
  Քո ծաղկունքն ամէնըն խշրի :
Գետինն երկընուցն ասաց ·
  Աստուծոյ մուննաթն աւելի ·
  Ջուրն 'ի յանդընդոցն հանեմ
  Որ ծաղկունքն ամէն զարդարի :
Երկինքըն գետնին ասաց ·
  Ինձ ունիմ քանց քեզ աւելի ·
  Կայծակ ու կարկուտ անեմ
  Քո ծաղկունքն ամէն խափանի :
Գետինն երկընուցն ասաց ·
  Աստուծոյ մուննաթն աւելի ·
  Ինչափ սար ու ձոր ունիմ
  Քո կարկուտն 'ի մէջըն լըցվի ·
  Կարկուտըն հեղեղ կապի ,
  Ի ծովերդ 'ի վայր վըտարի ·
  Դառնամ ամպ կըկին կուտամ
  Որ ծաղկունքն ամէն քամ լինի :
Երկինքըն գետնին ասաց ·
  Ինձ ունիմ քանց քեզ աւելի ·
  Ուր աղէկ կտրիճ մ'որ կայ
  Գայ 'ի քո ներքև զընտանի :
Գետինն երկընուցն ասաց ·
  Աստուծոյ մուննաթն աւելի ·
  Աստուած իր տըւած հոգին
  Թէ կ'առնէ՝ նա ի՞նչ տի լինի :
  Թէ մարմինն 'ի յիս չառնեմ
  Նա աշխարհ հոտուն անցանի ,
  Հրեշտակք հոտուն փախչին
  Երկինք ու գետինք տատանի :
Երկինքըն գետնին ասաց ·
  Ինձ ունիմ քանց քեզ աւելի ·
  Ինըն դասք հրեշտակքն որ կան
  Ամէնն իմ կողէս կուլինին :
Գետինն երկընուցն ասաց ·
  Աստուծոյ մուննաթն աւելի ·
  Սուրբ առաքեալք մարգարէք
  Ամէնն իմ կողէս կուլինին :
Երկինքըն գետնին ասաց ·
  Ինձ ունիմ քանց քեզ աւելի ·
  Յօթըն տակ երկինքն եմ ես
  Ուր արև լուսին կուլինի ·
  Ստեղծողն արարիչն Աստուած
  Աթոռով վըրաս կու բազմի :
Գետինն երկընուցն ասաց ·
  Աստուծոյ մուննաթն աւելի ·
  Յօթըն տակ երկինքդ ասեմ
  Այն ամէնն 'ի վայր՝ տի թափի ,
  Արև և լուսին ւաստղունքն
  Որ երթան 'ի հետ խաւարին ,
  Յու քո արարիչն Աստուած
  Աթոռով 'ի վայր տի իջնի ,
  Դատաստանն գետին տի լինի :
Ահա ցածացաւ երկինքն
  Ու գըլուխ եդիր գետընի · · ·
  Դուք այլ ցըծացէք մանկտիք
  Գըլուխ դըրէք գետընի ·
  Քան զերկիր ի՞նչ բարձըր կայ
  Որ գըլուխ եդիր գետընի :
  Այսօր վըրան կու քայլենք
  Վաղըն տի մտնունք ներքև հողին :

ԱՌԱԾ

Չլինի գարին 'ի մեր յոտս է կպել :

ԽՈԶԵՐՈՒ ձագուցն խաշած գարի տային որ գիրանէր և զենուէին : Տեսան ուղտու կողեռքն 1 , և գնացին մօտ մայրին՝ տրտնջացին · “ Մեզ ափով մի գարի կուտան , կումեռանիմք , և նոքա 'ի փափկութեանն կուվայելեն ,, : Ասէ · “ Համբերեցէք մինչև զհաշխու գարունն 2 տան ,, : — Մին օր եկին , սրով խոզերն որ տանին զենեն · Նոքա սկսան 'ի լալ և 'ի խանչել , մինչ զի զարհուրեցան կողեռքն · գնացին մօտ մայրն և հարցին · ասէ · “ Այն է գարու հաշիւն ,, : Ասեն կողեռքն · “ Աստուծոյ համար տեսէք՝ չլինի գարին 'ի մեր յոտս է կպել ,, :

ՈՍԿԻՓՈՐԻԿ

1 Ըղպօր ջուխերը : 2 Գարուայն , գարին :